**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 83-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 17-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3) 01.07.2026 թվականի դրությամբ Եղեգնաձոր համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողատեսքը աճուրդով օտարելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 157-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 3-ի N 71-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
7) «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մասին:

8) Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների աշխատակիցներին հերթական արձակուրդն օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

9) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ներկայացված փոխըմբռնման հուշագրի նախագիծը քննարկելու մասին:

10) Հրաչյա Բոյաջյանին Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 84-Լ

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզի

Եղեգնաձոր համայնքի ավագանու

2026 թվականի հուլիսի 17-ի N 84-Լ որոշման

Եկամտային մաս.

հազ.դրամ

| **Եկամտատեսակ** | **Նախատեսված** | **Կատարողական** | **Կատ. տոկոս** |
|---|---|---|---|
| | /2-րդ եռամսյակ/ | /2-րդ եռամսյակ/ | |
| Անշարժ գույքի հարկ | 17870 | 22824.9 | 127.7 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներից | 51050 | 42787.6 | 83.8 |
| Տեղական տուրքեր | 5028.8 | 6005.1 | 119.4 |
| Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 7480 | 5797.4 | 77.5 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 373009.3 | 373009.3 | 100.0 |
| Այլ դոտացիաներ | | | 0.0 |
| տեղական վճար | 36580 | 34585.8 | 94.5 |
| տեղական վճ.՝ծնողական մուծում | 13350 | 14786.8 | 110.8 |
| տեղական վճ.՝ աղբահանություն | 13660 | 10962.8 | 80.3 |
| տեղական վճ.՝ խմելու ջրի վարձավճար | 3570 | 4006.8 | 112.2 |
| Պետական տուրք | 1050 | 277 | 26.4 |
| Այլ եկամուտներ | 1400 | 102.3 | 7.3 |
| **Ընդամենը** | **493468.1** | **485389.4** | **98.4** |
| ***Ընդամենը սեփական եկամուտ*** | ***120458.8*** | ***112380.1*** | **93.3** |

| **Ծախսային մաս** | **Նախատեսված** | **Կատարողական** | **Կատ. տոկոս** |
|---|---|---|---|
| | /2-րդ եռամսյակ/ | /2-րդ եռամսյակ/ | |
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 86277.4 | 86277.4 | 100.0 |
| Պարգևատրումներ | 6705.8 | 6705.8 | 100.0 |
| Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | | | 0.0 |
| Էներգետիկ ծառայություններ | 13942.4 | 13942.4 | 100.0 |
| Կոմունալ ծառայություններ | 37772.3 | 37772.3 | 100.0 |
| Կապի ծառայություններ | 706.5 | 706.5 | 100.0 |
| Ապահովագրական ծախսեր | 321 | 321 | 100.0 |
| Գործողումների և շրջագայությունների ծախսեր | 4631 | 4631 | 100.0 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում | 6575.1 | 6575.1 | 100.0 |
| Մասնագիտական ծառայություններ | 2495.9 | 2495.9 | 100.0 |
| Ընթացիկ նորոգում և պահպանում | 926.2 | 926.2 | 100.0 |
| ..յութեր | 5636.9 | 5636.9 | 100.0 |
| Դրամաշնորհներ | 4348.6 | 4348.6 | 100.0 |
| Սուբսիդիաներ | 240091.2 | 240091.2 | 100.0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 1385 | 1385 | 100.0 |
| ..յլ ծախսեր | 1169.3 | 1169.2 | 100.0 |
| ..ենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, ..նարարություն | 102502.2 | 102502.2 | 100.0 |
| ..եքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 450 | 450 | 100.0 |
| ..յլ հիմնական միջոցներ | 1200 | 1200 | 100.0 |
| ..ողի իրացումից մուտքեր | -47475.8 | -167918.1 | 353.7 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 85-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ավելացնել գործառնական դասակարգման 04.09.01 (տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի (տող 2491), տնտեսագիտական դասակարգման 8411 (հողի իրացումից մուտքեր) հոդվածին՝ 30 200 000 (երեսուն միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և այն նպատակաուղղել ֆոնդային բյուջեի՝

ա. գործառնական դասակարգման 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 1 360 000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր բնակավայրի Մոմիկի և Միկոյանի այգիներում հանրային սանհանգույցի կառուցման և Գլաձոր բնակավայրի մանկապարտեզի լվացքատան կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի խորհրդատվական ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար, և 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 21 000 000 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի մարզադպրոցի տանիքի հիմնանորոգման

աշխատանքների և Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների համայնքի մասնաբաժնի ֆինանսավորման համար,

բ. գործառնական դասակարգման 04.02.04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգում տնտեսագիտական դասակարգման 5134 (նախահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Մալիշկա բնակավայրի կալերի թաղամասի ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի խորհրդատվական ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար,

գ. գործառնական դասակարգման 06.03.01 (ջրամատակարարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 7 140 000 (յոթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ Գլաձոր բնակավայրի ջրամբարի միջնամասում արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգման, Մալիշկա բնակավայրի ջրարբիացման համակարգի կառուցման և կոյուղու կառուցման, Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի զտման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի խորհրդատվական ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար.

2) Պակասեցնել՝ գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 5 450 000 (հինգ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և այն ավելացնել՝

ա. գործառնական դասակարգման 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսական դասակարգման 4216 (գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածին՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ ներհամայնքային փողոցների հարթեցման և փոսալցման աշխատանքների համար անհարժեշտ տեխնիկայի վարձակալության, և 4239 (ընդհանուր բնույթի ծառայություններ) հոդվածին՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ «Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի վթարային հատվածի քանդման աշխատանքների ֆինանսավորման համար,

բ. գործառնական դասակարգման 09.01.01 (նախադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածներին՝ 550 000 (հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ նախադպրոցական կրթությանն անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար,

գ. գործառնական դասակարգման 09.05.01 (արտադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածներին՝ 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ արտադպրոցական կրթությանն անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար,

դ. գործառնական դասակարգման 01.01.01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4241

(մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ՀԾ ծրագրի վերազինման ֆինանսավորման նպատակով,

ե. գործառնական դասակարգման 04.02.04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի ոռոգման առուների արդիականացման և ընթացիկ նորոգման ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 86-Ա

### 01.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն 01.07.2026 թվականի դրությամբ Եղեգնաձոր համայնքի հողերի հաշվեկշռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 87-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով անկախ գնահատող կազմակերպության կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքի մասով հաշվարկված շուկայական արժեքը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հուլիսի 17-ի N 87-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ

**ՑԱՆԿ**

| ՀՀ | Համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը | Սեփականության իրավունքը | Հողատեսքի | | | Կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Լոտը | Կադաստրային արժեքի 100 տոկոսը (ՀՀ դրամ) | | Գնահատված շուկայական արժեքը (ՀՀ դրամ) | Մեկնարկային գինը (կադաստրային արժեքի տոկոսը, ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Չափը /հա/ | | | 1 քմ | Ընդամենը | | |
| 1 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Վարելահող | 2.33186 | 10-001-0359-0047<br>N 23062026-10-0047 | 1 | 6.25 | 145741.25 | 5 400 000 | 5 400 000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 88-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «2026 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 157-Ն որոշման՝

1) N 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) N 11 հավելվածում «Հոգեբան» բառը փոխարինել «Լոգոպեդ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հուլիսի 17-ի N 88-Ա որոշման

Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 157-Ա որոշման

«ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 20
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ /4 խումբ/

| ՀՀ | Պաշտոնը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հաստիքային միավոր | Աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 247750 | 1 | 247750 |
| 2 | Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ | 177450 | 1 | 177450 |
| 3 | Երաժշտական ղեկավար | 157660 | 1 | 157660 |
| 4 | Դաստիարակ | 157660 | 4.48 | 706316.8 |
| 5 | Հոգեբան | 157660 | 1.00 | 157660 |
| 6 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 157660 | 0.5 | 78830 |
| 7 | Գլխավոր հաշվապահ | 287130 | 0.5 | 143565 |
| 8 | Խոհարար | 143570 | 1 | 143570 |
| 9 | Խոհարար օգնական | 153160 | 1 | 153160 |
| 10 | Բուժքույր | 206750 | 0.75 | 155062.5 |
| 11 | Դաստիարակի օգնական | 153160 | 3 | 459480 |
| 12 | Դաստիարակի օգնական | 143570 | 1 | 143570 |
| 13 | Պահակ | 153160 | 1 | 153160 |
| 14 | Լվացարար | 210210 | 0.25 | 52552.5 |
| 15 | Դռնապան | 153160 | 1 | 153160 |
| ***Ընդամենը*** | | **2659710** | **18.48** | **3082946.8** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 89-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 3-ի ««Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, իրավաբանական հացեն սահմանելու, կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 71-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հուլիսի 17-ի N 89-Ա որոշման

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 3-ի N 71-Ա որոշման

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**1. Աշխատողների քանակը՝ 36**

**2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝**

| ՀՀ | Պաշտոնը | Աշխատած ամիսները | Հաստիքային միավորը | Դրույքաչափը | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Վարչական աշխատողներ | | | | | | |
| 1 | Տնօրեն | 12 | 1 | 286,700 | 286,700 | 3,440,400 |
| 2 | Հաշվապահ | 12 | 1 | 191,700 | 191,700 | 2,300,400 |
| 3 | Ինժեներ-մեխանիկ | 12 | 1 | 276,700 | 276,700 | 3,320,400 |
| 4 | Գործավար | 12 | 1 | 151,700 | 151,700 | 1,820,400 |
| 5 | Տեսուչ աղբահանության | 12 | 1 | 175,000 | 175,000 | 2,100,000 |
| 6 | Օպերատոր-հաշվառիչ | 12 | 1 | 151,700 | 151,700 | 1,820,400 |
| **Ընդամենը** | | | **6** | **1233500** | **1,233,500** | **14,802,000** |
| **2. Կանաչապատ տարածքների պահպանություն իրականացնող աշխատողներ** | | | | | | |
| 7 | Տեղամասի պետ | 12 | 1 | 246,700 | 246,700 | 2,960,400 |
| 8 | Բանվոր/մշտական | 12 | 9 | 200,000 | 1,800,000 | 21,600,000 |
| 9 | Վարորդ | 12 | 1 | 200,000 | 200,000 | 2,400,000 |
| 10 | Բանվոր | 6 | 1 | 200,000 | 200,000 | 1,200,000 |
| 11 | Բանվոր բնակավայր (Գետափ,Գլաձոր,Վերնաշեն) | 12 | 2.25 | 200,000 | 450,000 | 5,400,000 |
| 12 | Բանվոր Սալիշկա բնակավայր | 6 | 1.5 | 200,000 | 300,000 | 1,800,000 |
| 13 | Բանվոր Սալիշկա բնակավայր | 12 | 1.5 | 200,000 | 300,000 | 3,600,000 |
| 14 | Ջրբաշխիչ | 12 | 4 | 200,000 | 800,000 | 9,600,000 |
| 15 | Պահակ -բանվոր | 12 | 1 | 200,000 | 200,000 | 2,400,000 |
| **Ընդամենը** | | | **22.25** | **1846700** | **4,496,700** | **50,960,400** |
| **3. Գերեզմանատան պահպանություն իրականացնող աշխատող** | | | | | | |
| 16 | Պահակ | 12 | 1 | 100,000 | 100,000 | 1,200,000 |
| **Ընդամենը** | | | **1** | **100000** | **100,000** | **1200000** |
| **4. Ավտոպարկ** | | | | | | |
| 17 | Վարորդ էքսկավատոր | **12** | **1** | 220000 | 220000 | 2,640,000 |
| 18 | Վարորդ (ավտոբուս) | 12 | 1 | 200000 | 200000 | 2,400,000 |
| 19 | Վարորդ (ուազ) | 12 | 1 | 200000 | 200000 | 2,400,000 |
| 20 | Էլեկտրիկ | 12 | 2 | 140,000 | 280000 | 3,360,000 |
| **Ընդամենը** | | | **5** | **760,000** | **900,000** | **10,800,000** |
| ***Ընդամենը*** | | | ***34.25*** | ***3,940,200*** | ***6,730,200*** | ***77,762,400*** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի   N 90-Ա

## «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2026 թվականի հուլիսի 20-ից դադարեցնել «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեությունը՝ մինչև ՎԴ/6509/05/26 գործով դատական ակտի ընդունումը:

2. Կազմակերպության անունից Հայաստանի Հանրապետության պետական և դատական մարմիններում հանդես գալու նպատակով լիազորել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 91-Լ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատակիցներին՝ 2025-2026 աշխատանքային տարվա հերթական արձակուրդն օգտագործել սկսած 2026 թվականի հուլիսի 20-ից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված օրերի քանակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 92-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, քննարկելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ներկայացված փոխըմբռնման հուշագիրը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության սպասարկման կենտրոնի գործունեությունն իրականացնելու նպատակով, Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Եղեգնաձոր քաղաքի Մոմիկի փողոց 6 շենք, 5 հասցեում գտնվող տարածքի օգտագործումը շարունակել վարձակալական հիմունքներով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2026 թվականի N 93-Ա

## ՀՐԱՉՅԱ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լեհաստանում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Հրաչյա Բոյաջյանին շնորհել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. հուլիսի 17
ք. Եղեգնաձոր